

## Սիրելի հայրենակիցներ,

«Լրատու»ի վերջին եւ նախավերջին թիւերով, ձեզի փոխանցեցի, Կիպրահայ գաղութի Ազգային դիմագիծի եւ գոյատեւման հետ անմիջականօրէն առնչուող, երկու հիմնական կառոյցներու անորոշ ապագային գծով մտահոգութիւններս, որոնք կը վերաբերէին Մելգոնեան Կրթական Զաստատութեան եւ Մակարավանքին:

Այս թիւով ծրագրած էի խօսքիս նախաբանը սկսիլ վերամուտի առթիւ յաջող կրթական տարեշրջանի մը մաղթանքներով, սակայն վերջին ամսուայ իրադարձութիւններու լոյսին տակ, պարտք կը զգամ նախ անդրադառնալու Զայաստան-Թուրքիա արձանագրութիւններու ստորագրման ստեղծած ճգնաժամին, որու արագ հոլովոյթը տագնապալից կացութիւն մը ստեղծեց թէ՛ Զայաստանի եւ թէ՛ Սփիւռքի Զայ գաղութներէն ներս:

28 Սեպտեմբեր 2009ի երեկոյեան, Զայաստանի Զանրապետութեան Յունաստանի Դեսպանութեան խողովակով ստացայ ԶԶ նախագահ Ն.Վ. Սերժ Սարգսեանի հրաւերը, մասնակցելու համահայկական ուղեւորութեան նախաձեռնութեան ծիրէն ներս Ֆրանսա կայանալիք հասարակական-քաղաքական քննարկումներուն, ներկայութեամբ Սփիւռքի Ազգային Կառոյցներու եւ քաղաքական գործիչներու: Յատուկ կարգադրութեամբ, փոխան Ֆրանսայի, Երեքշաբթի, 6 Յոկտեմբերին ներկայ գտնուեցայ Պէյրութի մէջ կայացած հանդիպումին:

Աւելորդ կը գտնեմ նկարագրելու Լիբանանահայութեան ընդվզումը եւ հանդիպումին ընթացքին տիրող

ճնշիչ մթնոլորտը, որու ականատես եղայ: Արտասան-  
 ած խօսքերը, մասնաւորապէս կը զգուշացնէին Յա-  
 յաստանի իշխանութիւնները, դիւանագիտական յարա-  
 բերութիւնները կարգաւորող այս փաստաթուղթերուն  
 ետին թաքնուած վտանգներէն, շեշտելով Յեղասպա-  
 նութեան, հողային տարածքներու եւ Արցախի ինքնո-  
 ղոշման իրաւունքը:

Սիրելիներ,

Կը հաւատամ, որ պէտք չէ միայն զգացական մօտե-  
 ցումով դիմագրաւենք համայն հայութեան ճակատա-  
 գիրը ձեւաւորող այս ճգնաժամը: Հաստատելով դիւա-  
 նագիտական կապեր, ըլլանք աջալուրջ եւ մնանք պա-  
 հանջատեր մեր արդար իրաւունքներու հատուցման եւ  
 Յեղասպանութեան ճանաչման գծով: Հեռու մնանք  
 ծայրայեղ կեցուածքներէ եւ քայլ առ քայլ յառաջանանք,  
 չպառակտելու համար Հայրենիք-Սփիւռք-Լեռնային  
 Ղարաբաղ անքակտելի երրորդութիւնը: Աշխարհի մէջ  
 չկայ որեւէ ուժ, որ կրնայ մեզի ակելի վնաս հասցնել  
 կամ ոչնչացնել, քան այն վնասը, որ մենք մեզի կրնանք  
 պատճառել մեր անհամաձայնութեամբ, անհանդուրժո-  
 ղականութեամբ եւ անհեռատես քաղաքականու-  
 թեամբ: Հետեւաբար, շարժիւք խոհեմ եւ համագոր-  
 ծակցութեամբ շարունակենք հայապահպանման ու  
 Հայ Ղատին գծով մեր տարած աշխատանքները: Ժա-  
 մանակը միայն կրնայ արժեւորել այս վերջին իրադար-  
 ձութիւններուն արդիւնքը:

Գալով վերջին եռամսեայի ընթացքին կատարած պե-  
 տական-պաշտօնական մակարդակի ճամբորդութիւն-  
 ներուս, Յուլիս 5-7 ընկերակցեցայ Կիպրոսի Հանրապե-  
 տութեան Նախագահ Ն.Վ. Տիմիթրիս Խրիստոֆիասի  
 Հայաստան, իսկ 2-4 Սեպտեմբեր Խորհրդարանի Նա-

խագահ Մարիոս Կարոյեանի Լիբանան կատարած այցելութիւններուն: Վերոյիշեալ այցելութիւններուն մանրամասն տեղեկատուութեան մասին անդրադարձած եմ «Լրատու»ի յաջորդ էջերուն մէջ:

Ինչպէս տեղեակ պահած էի ձեզի նախորդ թիւով, քաջալերելու համար Հայաստան-Կիպրոս յարաբերական աշխատանքները մշակութային ծիրէն ներս, Շաբաթ, 31 Յոկտեմբերին, Նիկոսիոյ «Բալլաս» հանդիսասարահէն ներս ելոյթ պիտի ունենայ Հայաստանի անուանի «Կոմիտաս» քառեակը: Ներփակ պիտի գտնէք համոյթի թերթիկը: Կը խնդրուի մուտքի տոմսերը նախօրօք ապահովել Երեսփոխանական Գրասենեակէն:

Իսկ Չորեքշաբթի, 18 Նոյեմբեր 2009ին, Առաջնորդարանի «Իւթիւճեան» սրահին մէջ տեղի պիտի ունենայ դասախօսութիւն-գրոյց «Մոլութիւններու Կանխարգիլում» նիւթով: Հրաւիրած ենք մասնագետ ջղաբան-հոգեբան Տոքթ. Կիրիակոս Վերէսյէսը, ներկայացնելու այս շատ հետաքրքրական ու այժմեական նիւթը: Կը յանձնարարենք, որ 10 տարեկանէն վեր եղող բոլոր տղաքն ու ծնողները ներկայ ըլլան եւ օգտուին այս ձեռնարկէն: Ներփակ պիտի գտնէք նաեւ այս միջոցառումին յայտարարութիւնը:

Յոյսով ենք, որ կը գնահատէք այս կազմակերպուած ձեռնարկները, որոնք կը հարստացնեն ընկերային ու մշակութային կեանքը մեր գաղութէն ներս: Ուստի, կը խնդրեմ ձեր ներկայութեամբ քաջալերէք այս նախաձեռնութիւնները:

**Վարդգէս Մահտեսեան**

**Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ**

## ԵՌԱՄՍԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

### Հպատակություն

Օգոստոս ամսուան ընթացքին, երկար տարիներ Նիկոսիա բնակություն հաստատած, սակայն կարգ մը պատճառներով թղթածրարը սառած անհատ մը ստացաւ Կիպրական հպատակություն: Այս հպատակութեան ձեռքբերումը ապահովուեցաւ Պրն. Վարդգէս Մահտեսեանի անձնական երաշխաւորութեամբ:

### Կիպրոսի Հանրապետութեան Նախագահին Պաշտօնական Այցը՝ Հայաստան



*Տիմիթրիու Խրիստոֆիաս եւ Սերժ Սարգսեան*

Երկուշաբթի, 6 Յուլիս եւ Երեքշաբթի, 7 Յուլիս 2009ին, Կիպրոսի Հանրապետութեան Նախագահ Ն.Վ.

Տիմոթիու Խրիստոֆիաս այցելեց Հայաստան: Հանրապետության Նախագահին հրավերով, որպես Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ, Պրն. Վարդգես Մահտեսեան մաս կազմեց Նախագահին ընկերակցող պատուիրակության այս երկօրեայ այցելության ընթացքին:



*Ծիծեռնակաբերդի յաւերժական կրակին առջեւ*

Նախագահներ Խրիստոֆիասի եւ Սարգսեանի պետական մակարդակի հանդիպումը շատ ակտիվ ամրապնդեց երկու երկիրներու միջեւ արդէն իսկ գոյութիւն ունեցող սերտ կապը: Նախագահ Խրիստոֆիաս իր խօսքին մէջ նշեց, թէ Հայաստան, Եւրոպական Միութեան մէջ, ունի իրեն զօրակից ու բարեկամ երկիր մը:

Պաշտօնական տեսակցութիւններու ծիրէն ներս, Կիպրոսի Նախագահը հանդիպումներ ունեցաւ նաեւ ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսեանին եւ Արտգործնախա-



*Պաշտօնական հանդիպումի ընթացքին*

րար Էտուարդ Նալպանտեանին հետ:

Նախագահ Խրիստոֆիաս, Հայաստան ժամանած օրը, տեսակցեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին հետ, ապա անոր գլխաւորած պատուիրակութեան հետ, այցելեց Ս. Էջմիածնի Սայր Տա-



*Վեհափառ Հայրապետին հետ*

ճարն ու թանգարանը:

Ծրագրուած շրջապտոյտներու շարքին, Նախագահը Նախ իր յարգանքի տուրքը մատուցեց Յեղասպանութեան զոհերուն յուշահամալիրին դիմաց, որմէ ետք յիշատակի ծառ մը տնկեց Ծիծեռնակաբերդի բակին մէջ, ապա այցելեց Մատենադարան, Գառնի եւ Գեղարդ:

**«Յայոց Յեղասպանութիւնն ու Միջազգային Օրէնքը»  
խորհրդածողով**

Միջին Արեւելքի Յայ Դատի Գրասենեակի եւ Լիբանանի Յայկազեան Համալսարանի կազմակերպութեամբ, 2-4 Սեպտեմբերին, Պէյրութի մէջ տեղի ունեցաւ «Յայոց Յեղասպանութիւնն ու Միջազգային Օրէնքը» ակադեմական խորհրդածողովը, ուր հրաւիրուած էին զանազան երկիրներէ աւելի քան 80 պատմաբաններ, մտաւորականներ եւ քաղաքական գործիչներ:

Կիպրոսի Խորհրդարանի Յայազգի Նախագահ Մարիոս Կարոյեան, որ խորհրդածողովին հիւր-բանախօսն էր, հրաւիրեց Պրն. Մահտեսեանը ընկերակցելու Լիբանան կատարած իր երկօրեայ այցելութեան ընթացքին:



Չորեքշաբթի, 2 Սեպտեմբերին, խորհրդածողովի առաջին նիստին Մարիոս Կարոյեան, խօսք առնելով ըսաւ, թէ ճանաչումով, դատապարտումով եւ կանխարգիլումով միայն կարելի է հաստատել արդարութիւնը: Ան իր խօսքը

եզրափակեց շեշտելով, որ միայն հաւաքական աշխատանքով ու գործակցութեամբ կ'իրագործուին հաւաքական նպատակներ:

Իսկ Յինգշաբթի, 3 Սեպտեմբերին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառը, Անթիլիասի Մայրաձանքին մէջ ընդունելով Կիպրոսի Խորհրդարանի Նախագահ Մարիոս Կարոյեանը, զայն պարգևատրեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Ասպետ»ի կարգի շքանշանով, իր կատարած հայանպաստ աշխատանքներուն համար: Պարգևատրումին ներկայ էին Կիպրոսի եւ Լիբանանի հայ երեսփոխանները, ինչպէս նաեւ Լիբանանի Ազգային Իշխանութենէն եւ Անթիլիասի Միաբանութենէն ներկայացուցիչներ:



Կարոյեան, Լիբանան այցելութեան ժամանակամիջոցին, տեսակցութիւններ ունեցաւ Լիբանանի Նախագահ Չօր. Միշէլ Սլէյմանին եւ Խորհրդարանի Նախագահ Նե-

պիի Պըրրիին հետ:

### **Շնորհաւորական գիր**

7 Սեպտեմբեր 2009 թուակիր շնորհաւորագիրով մը, Պրն. Մահտեսեան իր ու Կիպրահայ համայնքի անունով, նորանոր յաջողութեան բարեմաղթութիւններ փոխանցեց Խորհրդարանի Նախագահ Մարիոս Կարոյեանին, «Ասպետ»ի շքանշանին արժանանալուն համար, նշելով թէ Կիպրահայութիւնը հպարտութեամբ կը հետեւի անոր ներդրումներուն ի շահ համայն Յայութեան:

### **Պետական-պաշտօնական մակարդակի հանդիպումներ**

Ուրբաթ, 3 Յուլիս 2009ին, Պետական Ներկայացուցիչը հանդիպում ունեցաւ Պաշտպանութեան Նախարար Զոստա Փափաքոստասի հետ, զինուորական ծառայութեան գծով կարգ մը մանրամասնութիւններ քննարկելու:

Հինգշաբթի, 9 Յուլիս 2009ին, Մելգոնեան Կրթական Հաստատութեան Կիպրոսի Սանուց Սիութեան պատուիրակութիւն մը, գլխաւորութեամբ Պրն. Մահտեսեանի, տեսակցութիւն մը ունեցաւ Ներքին Գործոց Նախարար Նեոքլիս Սիլիկիոտիսին հետ, Մելգոնեան Կրթական Հաստատութեան կապակցութեամբ:

Իսկ Երկուշաբթի, 27 Յուլիս 2009ին, նոյն պատուիրակութիւնը, դարձեալ Պետական Ներկայացուցիչին գլխաւորութեամբ, հանդիպում ունեցաւ Կիպրոսի Պետական Համալսարանի Ռեկտոր Ստաւրոս Չէնիոսին հետ:

Երկուշաբթի, 7 Սեպտեմբեր 2009ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան Կիպրահայ համայնքին հետ առնչուող հարցերով, տեսակցութիւն ունեցաւ Արդարադատութեան Նախարար Լուկաս Լուկայի հետ:



*Արդարադատության Նախարար Լուկաս Լուկային հետ*

Երեքշաբթի, 22 Սեպտեմբեր 2009ին, Պետական Ներկայացուցիչը հանդիպում մը ունեցաւ, ԱԶԷԼ Կուսակցութեան Եւրոխորհրդարանի երեսփոխաններ Կիրիակոս Թրիանտաֆիլիտիսին եւ Թակիս Յաճիեորդիուին հետ, վերջիններուս խնդրանքով, Կիպրահայ գաղութը յուզող հարցերու շուրջ:

### **Ձեռնարկներու Ներկայութիւն**

Կիրակի, 27 Սեպտեմբեր 2009ին, ՏԵՐ եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ, ներկայ գտնուեցան Լիմասոլի Ս. Գեորգ եկեղեցւոյ անուանակոչութեան արարողութեան:

Չորեքշաբթի, 30 Սեպտեմբեր 2009ին, Առաջնորդարանի դահլիճին մէջ տեղի ունեցաւ Աւագ Արիապետ Յարութիւն Ամմահունիի պարգեւատրումը «Չօր. Անդրանիկ Օգանեան»ի բարձրագոյն շքանշանով, Հայաստանի բա-



*Ձախեն աջ.- Վարուժան Արք. Չերկելեան, Վահրամ  
Կաժոյեան, Յարութիւն Անմահունի եւ Վարդգէս Մահտեսեան*

Նակին կատարած իր նիւթական զօրակցութեան համար, ձեռամբ ՀՀ Յունաստանի եւ Կիպրոսի մօտ Լիազօր Դեսպան Վահրամ Կաժոյեանի, որ կը ներկայացներ ՀՀ Պաշտպանութեան Նախարար Սէյրան Օհանեանը, ներկայութեամբ Պետական Ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանի, Կաթողիկոսական Փոխանորդ Վարուժան Արք. Չերկելեանի եւ Ազգային Իշխանութեան անդամներուն:



## Ծանոթանանք Կիպրոսի Հանրապետության Օրենքներուն

### Տնտեսական Նախարարութիւն

#### Ջանազան տեսակի օժանդակութիւններ

Կիպրոսի Տնտեսութեան Նախարարութիւնը իր գործունեութեան ծիրէն ներս, տարիներու ընթացքին ծրագրած ու նախաձեռնած է նիւթական յատկացումներ եւ օժանդակութիւններ տրամադրելով, որոնցմէ կ'օգտուին ըստ կարիքի՝ **Կիպրահպատակ** եւ **Կիպրոս ապրող** ժողովուրդին մեծամասնութիւնը:

Ստորեւ, հակիրճ ձեւով կը նշենք կարելոր օժանդակութիւններէն հետեւեալները:-

- Համալսարանական Ուսուցման Կրթաթոշակի տարեկան օժանդակութիւն €2,562.90, իսկ երեք եւ աւելի զաւակ ունեցող ընտանիքներու պարագային՝ յաւելեալ €854,30 իւրաքանչիւր զաւակի համար

- Իւրաքանչիւր զաւակի (ամուրի) տարեկան յատկացում €409.99 մինչեւ 23-25 տարեկան, որոնք կ'ապրին ծնողքին հետ նոյն յարկին տակ, առանց նկատի առնելու ընտանիքին եկամուտը: Վերոյիշեալ գումարը ենթակայ է յաւելումի, ցած եկամուտով, մէկէ աւելի կամ բազմազաւակ

ընտանիքներու պարագային

- Բազմազաւակ ընտանիքի ինքնաշարժի գնման համար օժանդակութիւն €3,417.20 – €5,125.30 (միայն մէկ անգամ), ըստ ներկայացուած եկամուտին եւ զաւակներուն ստացած կառավարական օժանդակութեան:

- Արկածի պատճառով հաշմանդամ մնացած կամ անկարող անհատներու իւրայատուկ ինքնաշարժի գնման նիւթական օժանդակութիւն €15,377.41 – €18,794.62

- Կոյրերու յատուկ օժանդակութիւն տարեկան €3,417.20, վճարում՝ երկու բաժինով

- Առաջին բնակարանի շինութեան կամ գնման առթիւ նիւթական օժանդակութիւն, այն պայմանաւ, որ յաջորդ 10 տարիներուն ընթացքին, այս մէկը պիտի ըլլայ ընտանիքին հիմնական բնակարանը, մեծութիւնը պէտք չէ անցնի 250 քմ. սահմանները եւ Քաղաքի Ծրագրումի Գրասենեակի արտօնագիրը (Πολεοδομική άδεια) ապահովուած՝ 01.05.2004 թուականէն ետք: Օժանդակութեան գումարը կը որոշուի ըստ բնակարանի տեսակին (տուն կամ յարկաբաժին), ինչպէս նաեւ գնումի կամ շինութեան տարբերակին համաձայն:

Աւելորդ է յիշել, թէ վերոնշեալ յատկացումները կը տրամադրուին կարիքի համաձայն եւ միայն պատշաճ դիմումնագիրները ամբողջացնելու պարագային: Յաւելեալ մանրամասնութիւններու համար, հեռաձայնել Տնտեսութեան Նախարարութեան Օժանդակութեանց բաժանմունք հեռ. 22-804023, 22-450046 եւ կամ անձամբ ներկայանալ Քաղաքայիններու Սպասարկութեանց Գրասենեակ (Κέντρα Εξυπηρέτησης του Πολίτη).

# KOMITAS

## QUARTET

SATURDAY 31 October 2009 7:30p.m.  
PALLAS THEATRE NICOSIA



Organised by the office of the Armenian Representative - For tickets call 22 454540

SPONSORS



MINISTRY OF EDUCATION AND CULTURE



ΟΠΑΠ  
ΚΥΠΡΟΥ


MEDIA SPONSOR



ΠΟΛΙΤΗΣ  
Τα λέει ο λαός

## Մոլորփուններու Կանխարգիլում Prevention of Addictions

Why do people use different DRUGS?



### Դասախօսութիւն - Չրոյց

**«Չանազան Նիւթերու Գործածութեանց Կանխարգիլում»**

Չորեքշաբթի 18 Նոյեմբեր 2009, Երեկոյեան ժամը 8.00ին  
Առաջնորդարանի «Իւթիւնեան» սրահ

Բանախօս՝ Տոքթ. Կիրիակոս Վերեսյե - Ջոզբան/Յոգերան  
Speaker Dr. Kyriacos Veresies - Neurologist/Psychiatrist

Կը յանձնարարենք ձեռողներն ու 10 տարեկանէն վեր եղող բոլոր տղաքը ներկայ գտնուելու այս խիստ հետաքրքրական ձեռնարկին

Երեսփոխանական Գրասենեակ

Մեր յարգելի  
 ընթերցողներու  
 ազնիւ ուշադրութեան  
 կը փափաքինք յանձնել,  
 թէ այն պարագային  
 երբ բնակարանի փոփոխութիւն  
 կատարեն, պարտին  
 երեսփոխանական Գրասենեակը  
 տեղեակ պահել, փոխանցելով  
 սոր բնակարանի հասցէն:

## ԿԻՊՐԱՅԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

### Քաղաքական Գրասենեակ

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos  
 Հեռախօս 22- 45 45 40, Հեռատիպ 22- 42 46 42  
 Ել. Հասցէ office@armenianmp.com  
 Ոստայնէջ՝ <http://www.armenianmp.com>

### Խորհրդարանական Գրասենեակ

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia  
 Հեռախօս 22- 40 72 02, Հեռատիպ 22- 40 74 42  
 Ել. Հասցէ vmahdessian@parliament.cy